Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 243-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 6

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 6

1. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 8

IV. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ 22

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 23

4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 23

5. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24

6. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 24

7. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ 24

8. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ 25

9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 25

10. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ 25

11. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ 26

12. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 5-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 26

13. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 18-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 27

V. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 28
VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ..... 28
VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ..... 28

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 141/Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեպտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919 որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության	2020թ. օգոստոսի 17-ից մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը

կատարման ժամկետը	ներառյալ: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է, իսկ 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ՝ վերսկսվել:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում, այսուհետ՝ ՊԵԿ, հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2020թ. օգոստոսի 7-ի թիվ 141-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել Կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև դեկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեին վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 98,713,646.4 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 110,651,208.9 հազ. դրամ, իսկ 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանը՝ 70,674,004.7

հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 60,785,413.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 26,681,629.9 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 60,664,860.2 հազ.դրամ:

(Աղյուսակ 1)

հազ.դրամ

Միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Կատարման %-ը
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	**70,674,004.69**	**60,664,860.22**	**85.84**
Հարկային և մաքսային ծառայություններ	8,310,674.10	7,748,508.84	93.24
Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	1,872,720.00	1,872,720.00	100.00
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	556,810.30	299,075.02	53.71
Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսեր	4,762,800.00	4,762,800.00	100.00
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում	1,460,889.10	473,843.10	32.44
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում	12,495.00	-	-
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմաններով ապահովում	11,918.00	-	-
Փորձաքննությունների ծառայություններ	5,423.70	5,133.60	94.65
Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 5-րդ և 10-րդ միջոցառում	3,000,000.00	2,979,867.62	99.33
Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 18-րդ միջոցառման շրջանակներում աջակցության տրամադրում	3,500,000.00	3,424,213.29	97.83
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	105,444.92	105,444.92	100.00
Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում	75,246.70	75,246.70	100.00
Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին	42,558,556.00	34,507,793.26	81.08
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	98,820.00	69,330.00	68.82
Փոխանցումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին	4,342,206.87	4,342,206.87	100.00
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-

1. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները նախատեսվել են 1,695,009,852.1 հազ. դրամ, իսկ առաջին կիսամյակի համար ՀՀ կառավարության 2019 թվականի 26 դեկտեմբերի N 1919–Ն որոշմամբ հաստատված եռամսյակային համամասնություններով՝ 808,147,342.6 հազ դրամ:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների և 2018, 2019 թվականների ժամանակաշրջանների համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 2)

Եկամտատեսակը	**2018թ.**		**2019թ.**		**2020թ.**	
	մլրդ դրամ	**%-ը**	**մլրդ դրամ**	**%-ը**	**մլրդ դրամ**	**%-ը**
Ընդամենը, որից՝	**1,341.5**	**100.0%**	**1,565.5**	**100.0%**	**1,695.0**	**100.0%**
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,257.9	93.8%	1,464.3	93.5%	1,602.3	94.5%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	11.2	0.8%	12.4	0.8%	35.3	2.1%
3. Այլ եկամուտներ	72.4	5.4%	88.8	5.7%	57.4	3.4%

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված տնտեսական անկման կանխատեսումներով և «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով պայմանավորված՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները պետական բյուջեի ցուցանիշներում ներառելու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև կառավարության լիազորությունների շրջանակներում «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում պետական բյուջեի եկամուտների ծրագրային ցուցանիշների մասով կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ 2020 թվականի պետական

բյուջեի եմակուտների տարեկան և կիսամյակային ճշտված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1,581.4 մլրդ դրամ և 733.4 մլրդ դրամ:

2020 թվականի տարեկան և առաջին կիսամյակի եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 3)

մլրդ.դրամ

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Կատարման %-ն առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**1,695.0**	**1,581.4**	**808.1**	**733.4**	**716.7**	**45.3%**	**97.7%**
այդ թվում՝	-	-	-	-	-	**0%**	**0%**
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**1,602.3**	**1,447.3**	**770.3**	**688.9**	**680.3**	**47%**	**98.7%**
Պաշտոնական դրամաշնորհներ	**35.3**	**36.0**	**12.6**	**13.0**	**2.4**	**6.7%**	**18.5%**
Այլ եկամուտներ	**57.4**	**98.1**	**25.3**	**31.4**	**34.0**	**34.7%**	**108.2%**

2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի փաստացի եկամուտները (716.7 մլն դրամ) կազմել են կիսամյակային ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (733.4մլն.դրամ) 97.7%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (680.3 մլն դրամ) կազմել են ծրագրային ցուցանիշի (688.3 մլն դրամ) 98.7%-ը

Պետական բյուջեի առաջին կիսամյակի փաստացի եկամուտների 94.9%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.3%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 4.8%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2019 թվականի առաջին կիսամյակի համեմատ 2020թ. առաջին կիսամյակի պետական բյուջեի եկամուտները նվազել են 5.5%-ով կամ 41.8 մլրդ դրամով:

ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների 2020թ. առաջին կիսամյակի և նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատական ցուցնիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 4)

մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2019թ.		2020թ.		
		Հուվար-հունիս	տեսակ. կշիռը	Հունվար-հունիս	տեսակ. կշիռը	Աճի տեմպը %
1	2	4	5	6	7	8
1	Ընդամենը վճարված հարկային եկամուտներ և պետական տուրք	697,752.6	x	661,265.6	x	94.8%
1.1	ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրք	713,384.4	100.0%	680,289.3	100.0%	95.4%
1.1.1	ԱԱՀ, այդ թվում՝	230,146.9	32.3%	213,320.1	31.4%	92.7%
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	45,157.8	6.3%	49,801.6	7.3%	110.3%
1.1.2	Շահութահարկ	113,536.0	15.9%	97,312.3	14.3%	85.7%
1.1.3	Եկամտային հարկ	202,167.7	28.3%	207,039.4	30.4%	102.4%
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում՝	49,912.8	7.0%	52,635.1	7.7%	105.5%
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	7,308.5	1.0%	11,093.9	1.6%	151.8%
1.1.5	Շրջանառության հարկ	13,251.1	1.9%	14,664.5	2.2%	110.7%
1.1.6	Արտոնագրային հարկ	2,214.8	0.3%	29.4	0.0%	1.3%
1.1.7	Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	24,577.2	3.5%	29,067.3	4.3%	118.3%
1.1.8	Մաքսատուրք, այդ թվում՝	40,769.3	5.7%	29,829.5	4.4%	73.2%
1.1.8.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	35,951.4	5.0%	29,462.9	4.3%	82.0%
1.1.9	Սոցիալական վճար	9,394.0	1.3%	10,835.1	1.6%	115.3%
1.1.10	Այլ հարկային եկամուտներ	10,543.7	1.5%	10,787.0	1.6%	102.3%
1.1.11	Պետական տուրք	17,151.2	2.3%	14,964.4	2.2%	87.2%
1.1.12	Հարկերի անցումային գերավճար	-280.3	0.0%	-193.6	0.0%	-
1.2	Միասնական հաշվի մնացորդ (շարժ)	-15,631.8		-19023.7		-

2020 թվականի առաջին կիսամյակում, ըստ ՊԵԿ կողմից ներկայացված հաշվետվության, ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 680.3 մլրդ. դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշի 98.7%-ը: 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն և պետական տուրքերն նվազել են 4.6%-ով կամ 33.1 մլրդ դրամով, մասնավորապես՝

- 31.4%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 213.3 մլրդ. դրամ, որից 126 մլրդ դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 49.8 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 87.3 մլրդ դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից:

- 30.4%-ը ապահովվել է եկամտային հարկի հաշվին՝ կազմելով 207 մլրդ. դրամ:

- 14.3%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 97.3 մլրդ դրամ:

- 7.7%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 52.6 մլրդ դրամ:

Մասնավորապես՝ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 29.2 մլրդ դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 23.4 մլրդ դրամ: Նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ակցիզային հարկի գծով եկամուտները աճել են 5.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում ակցիզային հարկի դրույքաչափերի աճով և նոր դրույքաչափերի հաստատմամբ:

- 4.4 %-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 29.8 մլրդ դրամ:

- 2.2 %-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 14.7 մլրդ դրամ:

- 1.6%-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին՝ կազմելով 10.8 մլրդ դրամ:

- 4.3%-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 29.1 մլրդ դրամ:

- 1.6 %-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 10.8 մլրդ դրամ, մասնավորապես՝ 4.2 մլրդ դրամ կազմել են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 3.8 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 1.2 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները, 1.0 մլրդ. դրամ՝ ճանապարհային հարկը, 0.5 մլրդ. դրամ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 0.4 մլրդ. դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 29.4 մլն դրամ՝ արտոնագրային հարկը:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից միասնական հաշիվ փոխանցված գումարը կազմել է 193.6 մլն դրամ:

- 2.2 %-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին՝ կազմելով 15 մլրդ դրամ: Վճարված պետական տուրքերը կազմել են կիսամյակի ծրագրի 69.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու և պետական գրանցման համար սահմանված պետական տուրքերի կատարողականով:

Մասնավորապես՝ ավելի քան 5.1 մլրդ դրամ են կազմել օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, 5.4 մլրդ դրամ՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ ու արտոնագրեր (թույլտվություններ) տալու և շուրջ 2.1 մլրդ դրամ՝ պետական գրանցման համար գանձվող տուրքերը, որոնք առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշն ապահովել են համապատասխանաբար 66.8 %-ով, 74.5 %-ով և 70.8%-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ պետական տուրքի գծով մուտքերն նվազել են 12.8%-ով կամ 2.2 մլրդ. դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի (28.3%, 2 մլրդ դրամ), պետական գրանցման համար գանձված տուրքերի (31.5%, 961.1 մլն դրամ), ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի (49.1%, 590.1 մլն դրամ), հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի (37.1%, 398.6 մլն դրամ) նվազման հանգամանքով:

Իսկ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի մասով հակառակը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցվել է 56.7%-ով կամ 1.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է 2020 թվականի փետրվարի 1-ից մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի սահմանմամբ՝ հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե ապահովելով 1.5 մլրդ դրամի մուտքեր՝ 54.4%-ով ապահովելով առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են նաև բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների ու տրանսպորտի բնագավառներում լիցենզավորման համար գանձվող տուրքերը՝ կազմելով համապատասխանաբար 6.9 անգամ (516.1 մլն դրամով) և 7.2 անգամ (276.9 մլն դրամով):

Համաձայն ՀՀ ՊԵԿ կողմից հրապարակված հաշվետվությունների, ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների համաձայն 2020թ. առաջին կիսամյակի և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, ինչպես նաև վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 5)

մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2019թ.	2020թ.	
		Հունվար-հունիս	Հունվար-հունիս	Աճի տեմպ %
1	2	4	6	7

1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	**32,814.5**	**36,042.2**	**109.8**
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	**13,754.5**	**22,924.1**	**166.7**
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	**430.7**	**166.4**	**38.6**
4	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	**3,366..3**	**5,848.1**	**173.7**
5	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**50,366.0**	**64,980.9**	**129.0**

2020թ. առաջին կիսամյակում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 36,042.2 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 9.8 տոկոսով, նմանապես՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը, նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի են 66.7 տոկոսով: Ի տարբերություն ԱԱՀ-ի մասով վերը նշված փոխհատուցված գումարների, ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել են 61.4 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19-ի հանգամանքով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 73.7 տոկոսով:

2020 թվականի առաջին կիսամյակում ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

(Աղյուսակ 6)

Բյուջե մուտքերը ըստ եկամտային հաշիվների. հազ. դրամ

Ժամանակահատված	**Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր**	**Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր**	**Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ**	**Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ**
2020թ. 1-ին կիսամյակ, այդ թվում՝	**596,166,973**	**26,636,883**	**123,388,048**	**746,191,904**
Հունվար	133,445,781	5,965,293	21,214,740	160,625,813
Փետրվար	67,231,868	4,352,398	21,001,219	92,585,485
Մարտ	102,800,953	5,331,998	22,879,590	131,012,541
Ապրիլ	140,523,351	4,339,032	17,688,570	162,550,953
Մայիս	70,019,017	3,436,667	16,784,319	90,240,003
Հունիս	82,146,003	3,211,495	23,819,610	109,177,108

*Հարկերի միասնական հաշվի մուտքերում հաշվի են առնվել վերահաշվարկները և ճշտումները

(Աղյուսակ 6.1)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները. հազ. դրամ

Ամիս	**Անցումային գերավճարից վերադարձ հարկատուներին**	**Դեբետային գերավճարից վերադարձ հարկատուներին, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությունների համաձայն վերադարձված**	**Վարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսներ**	**ԱԱՀ-ի վերադարձ (Tax free)**	**Այլ ելքեր**	**Ընդամենը հարկերից վերադարձների գումարը**
Հունվար	56,203	13,420,945	358,516	25,973	65,463	13,927,100
Փետրվար	27,404	5,155,686	2,009,365	15,212	73,812	7,281,479
Մարտ	51,140	13,429,330	416,063	45,022	39,254	13,980,809
Ապրիլ	31,643	10,172,212	593,086	39,883	41,634	10,878,458

Մայիս	11,721	5,403,687	1,824,020	23,650	34,200	7,297,278
Հունիս	15,535	11,815,858	642,884	16,648	46,514	12,537,439
Ընդամենը	**193,646**	**59,397,718**	**5,843,934**	**166,388**	**300,877**	**65,902,563**

2020թ. առաջին կիսամյակի արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

(Աղյուսակ 6.2)

Ամիս	**Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը**	
Հունվար	146,698,713	
Փետրվար	85,304,007	
Մարտ	117,031,733	հազ.
Ապրիլ	151,672,496	դրամ
Մայիս	82,942,724	
Հունիս	96,639,670	
Ընդամենը 2020թ. 1-ին կիսամյակ	**680,289,343**	

IV. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 98,713,646.4 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 110,651,208.9 հազ. դրամ, իսկ 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանը՝ 70,674,004.7 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 60,785,413.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 26,681,629.9 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 60,664,860.2 հազ.դրամ:

ՀՀ ՊԵԿ 2020թ. առաջին կիսամյակի բյուջեի ծախսերի կատարողականը ըստ միջոցառումների հետևյալն է.

(Աղյուսակ 7)
հազ.դրամ

Միջոցառում Հոդված		Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը	Պլանի մնացորդ
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		**70,674,004.69**	**60,785,413.74**	**60,664,860.22**	**57,123,284.34**	**85.84**	**9,888,590.95**
01010201	Հարկային և մաքսային ծառայություններ	8,310,674.10	7,771,678.58	7,748,508.84	8,149,532.82	93.24	538,995.52
	Աշխատանքի վարձատրություն	6,440,715.20	6,440,715.20	6,440,715.20	6,932,076.71	100.00	
	Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	1,869,958.90	1,330,963.38	1,307,793.64	1,217,456.11	69.9	538,995.52
01010203	Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	1,872,720.00	1,872,720.00	1,872,720.00	621,550.41	100.00	-
01010206	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	556,810.30	299,166.28	299,075.02	299,075.02	53.71	257,644.02
	- Վարչական սարքավորումներ	179,996.00	85,791.54	85,791.54	85,791.54	47.66	94,204.46
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	376,814.30	213,374.74	213,283.48	213,283.48	56.60	163,439.56
	- Աճեցվող ակտիվներ	-	-	-	-	-	-
	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	-	-	-	-	-	-
01010207	Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսեր	4,762,800.00	4,762,800.00	4,762,800.00	1,903,998.82	100.00	-

01010211	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում	1,460,889.10	473,843.10	473,843.10	649,530.92	32.44	987,046.00
	- Շենքերի և շինությունների շինարարություն	1,417,739.10	445,893.10	445,893.10	621,580.92	31.45	971,846.00
	- Նախագծահետազոտական ծախսեր	43,150.00	27,950.00	27,950.00	27,950.00	64.77	15,200.00
01010212	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում	12,495.00	-	-	-	-	12,495.00
	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	11,495.00	-	-	-	-	11,495.00
	- Նախագծահետազոտական ծախսեր	1,000.00	-	-	-	-	1,000.00
01010220	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմաններով ապահովում	11,918.00	-	-	-	-	11,918.00
	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	2,233.00	-	-	-	-	2,233.00
	- Հող	9,685.00	-	-	-	-	9,685.00
01060104	Փորձաքննությունների ծառայություններ	5,423.70	5,133.60	5,133.60	5,133.60	94.65	290.10
04010121	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 5-րդ և 10-րդ միջոցառում	3,000,000.00	2,999,791.57	2,979,867.62	2,979,867.62	99.33	208.43
04010122	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 18-րդ միջոցառման շրջանակներում աջակցության տրամադրում	3,500,000.00	3,500,000.00	3,424,213.29	3,424,213.29	97.83	-
04090120	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և	105,444.92	105,444.92	105,444.92	105,444.92	100.00	-

	վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ						
09050211	Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում	75,246.70	75,246.70	75,246.70	65,354.60	100.00	-
10020110	Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին	42,558,556.00	34,508,052.12	34,507,793.26	34,507,793.26	81.08	8,050,503.88
10090201	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	98,820.00	69,330.00	69,330.00	68,007.00	68.82	29,490.00
10090226	Փոխանցումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին	4,342,206.87	4,342,206.87	4,342,206.87	4,342,206.87	100.00	-
11010101	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-	1,575.19	-	-
	- Այլ ծախսեր	-	-	-	1,575.19	-	-

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկային և մաքսային ծառայություններ ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային ծառայություններ միջոցառման մասով 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 20,012,049.3 հազ. դրամ գումար, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ 19,987,538.4 հազ.դրամ:
2020թ. առաջին կիսամյակի պլանը սահմանվել է 8,321,633.4 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 8,310,674.1 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 7,748,508.8 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 538,995.5 հազ. դրամ:

Մասնավորապես՝ սույն միջոցառման շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 8)
հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	**2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղի ծախսը**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը 6=4/2 x100%**	**Պլանի մնացորդ 7=2-3**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
Ընդամենը	**8,310,674.10**	**7,771,678.58**	**7,748,508.84**	**8,149,532.82**	**93.24**	**538,995.52**
Աշխատանքի վարձատրություն	6,440,715.20	6,440,715.20	6,440,715.20	6,932,076.71	100.00	
Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	1,869,958.90	1,330,963.38	1,307,793.64	1,217,456.11	69.9	538,995.52

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է 6,932,076.7 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 6,440,715.2 հազ. դրամ, աշխատանքի վարձատրության մասով առաջին կիսամյակի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմում է 504,117.1 հազ. դրամ:

Աշխատանքի վարձատրության գծով ծախսի (դրամարկղի ծախսի) կատարողականը առաջին կիսամյակի ճշտված ծրագրային ցուցանիշի նկատմամբ կազմել է 100%:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականը կազմել է 69.9 տոկոս, կիսամյակի ճշտված պլանի համեմատ տարբերությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ որոշ

ապրանքների և ծառայությունների ձեռքբերման մրցույթները COVID-19-ի հետևանքով կայացել են կիսամյակի վերջում:

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների ձեռքբերման միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի ցուցանիշները հետևյալն են.

(Աղյուսակ 9)
հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	**2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Փաստ**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը 6=4/2 x100%**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
Ընդամենը	**6,635,520.0**	**6,635,520.0**	**6,635,520.0**	**2,525,549.2**	**100,0**
Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	1,872,720.0	1,872,720.0	1,872,720.0	621,550.4	100,0
Դրոշմապիտակների ձեռքբերում	4,762,800.0	4,762,800.0	4,762,800.0	1,903,998.8	100,0

Նշված ծրագրերով ծախսերի (դրամարկղի ծախսի) կատարողականը կիսամյակի և տարեկան ճշտված պլանների նկատմամբ կազմել են 100 տոկոս, փաստացի ծախսերը ակցիզային դրոշմանիշների մասով կազմել է 621,550.4 հազ. դրամ, իսկ դրոշմապիտակների մասով՝ 1,903,998.8 հազ. դրամ, ձեռքբերումները կատարվել են տարեկան նախատեսված ամբողջ ծավալների չափով և համապատասխանաբար կազմել են 477,000 հազ. հատ 1,872,720.0 հազ. դրամ և 1,259,000.8 հազ.հատ 4,762,800.0 հազ. դրամ:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառման շրջանակներում ռենտգենային սարքավորումների տեխնիկական սպասարկում միջոցառման մասով ծախսերի 2020թ. տարեկան և առաջին կիսամյակի պլանային ճշտված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 1,179,914.0 հազ. դրամ և 556,810.3 հազ. դրամ, կիսամյակի ֆինանսավորումը՝ 299,166.3 հազ. դրամ, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 299,075.0 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 257,735.3 հազ.դրամ: Տարբերությունը ՊԵԿ կողմից հիմնավորվել է, COVID-19-ով պայմանավորված՝ ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վճարահաշվարկային փաստաթղթերի ոչ ամբողջությամբ ներկայացման, թվով 489 հատ համակարգիչների ձեռքբերմները ժամանակավորապես հետաձգման, թվով 4 վարժեցվող շների և 1 ծրագրային փաթեթի ձեռքբերումը երրորդ եռամսյակ տեղափոխման հանգամանքներով:

4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում միջոցառումներով 2020թ. առաջին կիսամյակի պլանային ճշտված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 1,460,889.1 հազ. դրամ և 12,495.0 հազ. դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում միջոցառումով COVID-19-ով պայմանավորված աշխատանքները հետաձգվել են և 2020թ. առաջին կիսամյակում ծրագրով ֆինանսավորում և դրամարկղի ծախս չի կատարվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում միջոցառոմով դրամարկղի ծախսը կազմել է 473,843.1 հազ.դրամ,

փաստացի ծախսը՝ 649,530.9 հազ.դրամ իսկ հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 987,046.0 հազ.դրամ: Շինարարական աշխատանքները հետաձգվել են, պայմանավորված է COVID-19-ով, կատարված աշխատանքների ավարտվածության աստիճանը կազմել է 41.8 տոկոս:

5. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձաքննությունների ծառայությունների միջոցառումով 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 5,423.7 հազ. դրամ, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 5,133.6 հազ.դրամ: Առաջին կիսամյակում պլանավորված և փաստացի ծախսված գումարների տարբերությունը՝ 290.1 հազ.դրամ, պայմանավորված է փորձաքննությունների ծառայությունների ավելի նվազ գներով ձեռք բերման հանգամանքով:

6. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում միջոցառման շրջանակներում ծախսերի կատարողականը կազմել է 100 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղի ծախսերը կազմել 75,246.7 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 65,354.6 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել է թվով 1345 հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ (թվով 23 դասընթաց 90 ուսումնական խմբերով): Վերապատրաստումները իրականացվել են պլանավորված դասընթացների և ուսումնական խմբերի քանակներին համապատասխան, սակայն Հանրապետությունում ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված (COVID-19) մասնակիցների թվաքանակը նվազել է 657 ծառայողով՝ կազմելով 688 մասնակից:

7. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների գծով ծախսերը կազմել են 105,444.9 հազ. դրամ, կատարողականը կազմել է 100 տոկոս:

8. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմաններով ապահովվում միջոցառումով 2020թ. տարեկան և առաջին կիսամյակի ճշտված պլանները կազմել են 11,918.0 հազ. դրամ, որից հողերի ձեռք բերման համար՝ 9,685.0 հազ.դրամ և շենքերի և շինությունների ձեռք բերման համար՝ 2,233.0 հազ.դրամ:

Սույն ծրագրով նախատեսվել է քաղաք Գյումրի, Թբիլիսյան խճուղի 2/16 հասցեում ձեռք բերել 1148.9 քառ.մետր հողատարածք և 195.57 քառ.մետր շենք-շինություն, սակայն գույքի սեփականատիրոջ կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման գործընթացում ի հայտ եկած անհամապատասխանություններով պայմանավորված գործարքներ չեն կատարվել:

9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շրջանակներում ՊԵԿ աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար 2020թ. պետական բյուջեի տարեկան և առաջին կիսամյակի ճշտված պլանները համապատասխանաբար կազմել են՝ 237,168.0 հազ. դրամ և 98,820.0 հազ. դրամ: 2020թ. առաջին կիսամյակի դրամարկղի ծախսը կազմել է 68,007.0 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմում է 30,813.0 հազ. դրամ գումար կամ ճշտված պլանի 31.2%-ը:

Շահառուների նախատեսված քանակը կազմել է 3294 աշխատակից, սակայն սոցիալական փաթեթից օգտվել են 2267 աշխատակից, նախատեսված քանակից 1027 աշխատակցով պակաս, որը համաձայն ՊԵԿ կողմից ներկայացված հաշվետվության, պայմանավորված է աշխատողների աշխատանքի ընդունման վեց ամիսը լրացած չլինելու և շահառուների ցանկում չընդգրկվելու, ինչպես նաև մի շարք աշխատողների կողմից դիմումներ չներկայացնելու հանգամանքներով:

10. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասով 2020թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի ճշտված պլանը,

ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը համապատասխանաբար կազմել են 4,342,206.9 հազ. դրամ:

Վճարումները կատարվել են ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման կողմից տրամադրված՝ փաստացի վճարումների անհատականացված տվյալների հիման վրա:

11. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ

Կենշաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակներում կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին միջոցառման մասով 2020 թվականի տարեկան և առաջին կիսամյակի պլանները կազմել են համապատասխանաբար՝ 70,007,556.2 հազ. դրամ և 33,958,556.0 հազ. դրամ գումար, իսկ կիսամյակի ճշտված պլանը՝ 42,558,556.0 հազ.դրամ: Դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 34,507,793.26 հազ.դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 8,050,762.74 հազ. դրամ, մասնակիցների պլանային թվաքանակի՝ 345 467 մարդ, համեմատ փաստացի ցուցանիշը համաձայն ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման ամփոփած տվյալների (փաստացի վճարումների անհատականացված տվյալների) կազմել է 367,805 մարդ՝ 22,338 միավորով պակաս:

12.ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 5-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների (մինչև 20000 սուբյեկտ) մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանության և շուրջ 6200 միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողներին ցուցաբերել օժանդակություն, որի նպատակով կիսամյակի համար նախատեսվել է 3,000,000.0 հազ.դրամ գումար: Միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 13928 տնտեսվարող սուբյեկտ և 5388 միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ, որոնց գծով ծախսը կազմել է 2,979,867.6 հազ.դրամ:

13. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ 18-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների (մինչև 20000 սուբյեկտ) մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանության նպատակով տնտեսավարողներին ցուցաբերել օժանդակություն, որի համար կիսամյակում նախատեսվել է 3,500,000.0 հազ.դրամ գումար: Միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 11700 շահառու, ծախսված միջոցների գումարը կազմել է 3,424,213.3 հազ.դրամ: Օժանդակությունը նախատեսվել է այտ տնտեսվարողներին, որոնք 2020թ. փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին պահպանել են աշխատատեղերը (ունեցել են 2-100 աշխատող) և հաշվարկված եկամուտների ֆոնդը:

V. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել: